

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 31/18**

ք.Երևան

6 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Աշոտ Աշոտյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Ա/Ձ Աշոտ Աշոտյանը հայտնում է, որ 2018 թվականի համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը լրացրել է սույն թվականի հունվարի 20-ին և գրանցել՝ վստահ լինելով, որ հաշվետվությունը ստորագրվել և ուղարկվել է:

Ա/Ձ Աշոտ Աշոտյանը դժվարանում է ասել, պատճառը ծրագրային խնդիրն է եղել, թե իր անուշադրությունը, քանի որ անցել է բավականին ժամանակ և չունի նաև ծանուցում հաշվետվությունը ներկայացված լինելու վերաբերյալ:

Ա/Ձ Աշոտ Աշոտյանը 2018 թվականի հունվարի 1-ից առ այսօր որևէ գործարք չի կատարվել և հաշվետվություն չի ներկայացվել, այդ իսկ պատճառով էլեկտրոնային համակարգ մուտք չի գործել և չի նկատել խնդիրը:

Ա/Ձ Աշոտ Աշոտյանը խնդրում է հաշվի առնելով ներկայացված հիմնավորումները և թույլ տալ համարվել որպես շրջանառության հարկ վճարող:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Ա/Ձ Աշոտ Աշոտյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում կրկին հաշվառվել է 25.05.2017թ.:

Ա/Ձ Աշոտ Աշոտյանին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ ծանուցվել է 15.06.2017թ.:

Ա/Ձ Աշոտ Աշոտյանը զբաղվում է օժանելիքի և կոսմետիկական միջոցների արտադրությամբ և 2017թ. ընթացքում իրացման շրջանառությունը կազմել է 1.749.128 դրամ:

Ա/Ձ Աշոտ Աշոտյանի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, որի հետևանքով նա համարվել է ԱԱՀ վճարող:

### 3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Աշոտ Աշոտյանի կողմից սահմանված կարգով և ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

Միևնույն ժամանակ ներկայացված դիմում-բողոքում չի ներկայացվել հիմնավոր փաստարկ (ապացույց)՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Ա/Ձ Աշոտ Աշոտյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



**Դ.ԱՆԱՆՅԱՆ**